

է 1638ին նաեւ Էջմ. 2656 Աւետարանը «ի յերկիրն Սիւնեաց ի գեաււն որ կոչի Բոնակոթ», դոր սրբադրած է «Աստուածատուր երիցուկ». «կազմեցաւ... ձեռամբ զտէր Արիստակէսին եւ զտէր Մարգարին ի դուռն Երինջակայ սուրբ Կարապետին ի յառաջնորդ սորին զԵսայեա վարդապետաց վարդապետն եւ յաջորդ սորին զՂազար բաբունին...: Արդ ես Արիստակէս վարդապետ ետու յիշատակ զսուրբ Աւետարանս Շամբայ ձորոյ ի դուռն սուրբ Աստուածածնին: ... Դարձեալ յիշեցէք զառաջնորդ սուրբ Ստեփանոս նախավկայիս զՄիքայէլ քաջ բարունապետն: Դարձեալ յիշեցէք զքահանայք սուրբ Աստուածածնիս զտէր Մաթէոսն, զտէր Բարսեղն, զտէր Սարգիսն, զտէր Մարգարէն: Եւ զհանգուցեալ քահանայքն զտէր Ագարիայն, զտէր Խաչատուրն, զտէր Հայրապետն. ամէն»:

Ուրիշ Աւետարան մը կ'օրինակէ Յովհաննէս զրիչ 1635ին «ի Խոտանան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին» ի խնդրոյ Արիստակէս վարդապետին: Գրիչը խնդրելէ ետքը թէ «Աստուած ողորմի ասէք տէր Արիստակէս վարդապետին եւ իւր ծնողացն», կը յայտնէ, որ 1640ին Փիլիպպոս կաթողիկոս ուղարկած է Աւետարանս Տիգրանակերտ խոճայ Երեմիային, որպէս զի մանրանկարչութեան թերի մասերը լրացնել տայ Եղիազար ծաղկողին. «քանզի մինչդեռ ի մարմնի էր վարդապետն Արիստակէս, ետ գրել զսուրբ Աւետարանս, նաեւ չորեսին Աւետարանչացն զպատկերսն